ԳՅՈՒՄՐՈՒ ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ
ÖSTERREICHISCHES MUTTER KIND ZENTRUM

**Արձանագրություն N 3**

***«ՇՄԳՄՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/4-2» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի***

ք. Գյումրի 25 դեկտեմբերի 2017թ., ժ 17:30

Մասնակցում էին՝

***Հանձնաժողովի նախագահ՝*** ***Կարեն Հմայակյան***

*Գնման պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի պատասխանատու-ԳՊ/ԳԱՊ*

***Անդամներ՝***

*Գնման պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ-ԳՊ/ԳԱ* ***Սիրուշ Պողոսյան***

***Լիլիթ Հովհաննիսյան***

*Գնման պատասխանատու/Բացման Աշխատակազմ-ԳՊ/ԲԱ* ***Անահիտ Մելքոնյան***

***Կարեն Ասատրյան***

***Հանձնաժողովի քարտուղար՝*** ***Նվարդ Բադալյան***

*Գնման պատասխանատու/Մրցույթի համակարգող-ԳՊ/Մհմ*

1. ***Ընդունել ի գիտություն***

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի/Կարգ/ 43-րդ կետի 3 և 4 ենթակետերի համաձայն էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 20.12.2017թ. հարցում է ուղարկվել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակիցների անվանումները և հարկ վճարողի հաշվառման համարը /կցվում է/:
Գնահատող հանձնաժողովի 20.12.2017թ. թիվ 2 որոշմամբ էլեկտրոնային փոստի միջոցով նիստին հաջորդող աշխատանքային օրը առաջին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցներին ծանուցվել է՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստով ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի "գ" պարբերությամբ սահմանված առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը/հավելված 6 և 6.1/ /կցվում է/:

2. ***Հանձնաժողովն արձանագրեց***

Կարգով սահմանված ժամկետում Կոմիտեից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պաևտավորությունների վերաբերյալ ստացվել է դրական եզրակացություն /կցվում է/:
Ընկերությունների կողմից սահմանված ժամկետում էլեկտրոնային փոստով ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը /կցվում են/:

Ներկայացված փաստաթղթերը գնահատման թերթիկի հետ միասին հանձնաժողովի քարտուղարի կողմից տրամադրվել են հանձնաժողովի անդամներին գնահատելու համար:

*3. <u>Հանձնաժողովը որոշեց</u>*
*<u>Հիմք ընդունելով վերոգրյալը</u>՝*

***3.1*** Հաղթող մասնակից ճանաչել
թիվ 21 չափաբաժնի մասով՝ <<Լեյկոալեքս>> ՍՊԸ –ին

թիվ 6, 9, 11-15, 17, 18, 20, 22-28, 30, 33-36, 40-47, 52, 55, 56, 59, 61, 63-65, 67, 69, 71, 74, 76 չափաբաժինների մասով՝ << Նատալի Ֆարմ >> ՍՊԸ–ին

թիվ 3-5, 7, 8, 10, 19, 31, 38-39, 51, 58, 60, 62, 72 չափաբաժինների մասով՝ <<Արֆարմացիա>> ՓԲԸ–ին

թիվ 50, 73, 75 չափաբաժինների մասով՝ <<Թեոֆարմա>> ՍՊԸ–ին

թիվ 53, 70 չափաբաժինների մասով՝ <<Հերմինե Ֆարմեց>> ՍՊԸ –ին

***Որոշումը ընդունվել է՝ կողմ 5, դեմ՝ 0***

***3.2*** Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը/կցվում է/:

***Որոշումը ընդունվել է՝ կողմ 5, դեմ՝ 0***

***3.3*** Ամփոփման նիստը հրավիրել պայմանագրեր կնքելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 17:30-ին:

***Որոշումը ընդունվել է՝ կողմ 5, դեմ՝ 0***

Հանձնաժողովի ՝
Նախագահ՝ Կարեն Հմայակյան

Անդամներ՝ Սիրուշ Պողոսյան

Լիլիթ Հովհաննիսյան

Անահիտ Մելքոնյան

Կարեն Ասատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Նվարդ Բադալյան